## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք,
գ.Լերմոնտովո, Հեռ. (0322)68570 ,
lermontovo.lori@mta.gov.am

N 86
*17 հուլիս 2017թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից ներկայացնում ենք Լերմոնտովո համայնքի ավագանու ս.թ. հուլիսի 11-ի նիստի թիվ 15 - 20 որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

17.07.2017

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

11 հուլիսի 2017 թվականի N 15

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 Թ-Ի ՀՈՒԼԻՍԻ 11-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՜՜Տեղական ինքնակառավարման մասին՜՜ ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Լերմոնտովո համայնքի 2017 թ-ի հուլիսի 11-ի նիստի օրակարգը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ
2. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ
3. ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ
4. ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ
5. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2017 թվականի N 16

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ընդունել ի գիտություն 2017 թ-ի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ
2. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ
3. ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ
4. ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ
5. ԾՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2017 թվականի N 17

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 2017 թ-ի համայնքի հողային ֆոնդի բաշխումը ըստ հողատեսքերի և նպատակային նշանակության:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ
2. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ
3. ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ
4. ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ
5. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 11 » հուլիսի 2017 թվական N 18 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան՝ Լերմոնտովո համայնքի ավագանին

### ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 6-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Լերմոնտովո համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» N 9 որոշումը:

3. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո համապատասխան ժամկետում ավագանու հաստատմանը ներկայացնել որոշումից բխող «Լերմոնտովո համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագիծը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի օգոստոսի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

2. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

3. ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

4. ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ

5. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

« 11» հուլիսի 2017 թվական, N 19-Ա

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ Լերմոնտովո համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով՝

1.Հարությունյան Անահիտ — համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի նախագահ,
2.Խեչումյան Ռոզա — համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,
3.Բոլոտինա Մարիյա — համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ, հանձնաժողովի քարտուղար,
4.Ասադով Վիտալի — ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ
5.Կորոլյով Անդրեյ — ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ

2. Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել դրանք համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո 7–օրյա ժամկետում և հանձնաժողովի եզրակացությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:

Կողմ -5    Դեմ -0    Ձեռնպահ -0

1. ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ
2. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ
3. ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ
4. ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ
5. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«11» հուլիսի 2017 թվական, N 20-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 18-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-կետով Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Բավարարել համայնքի բնակչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակչներին:
3. Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ավագանու 2017 թ-ի ապրիլի 6-ի թիվ 10 որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ
2. ԲՈՒԼՈՏԻՆ ԻՎԱՆ
3. ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ
4. ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ
5. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ